ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. փետրվարի 4-8-ը Ֆիլիպիններ (ք. Մանիլա) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Դավիթ Խուդաթյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ֆիլիպիններ, ք. Մանիլա, 2025թ. փետրվարի 4-8-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հրավերը ստացվել է Ֆիլիպինների Բաց կառավարման գործընկերության քարտուղար, բյուջեի և կառավարման վարչության նախագահ Ամենահ Պանգանդամանից:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Հանդիպման ընթացքում քննարկվեն են բաց կառավարման բարեփոխումների ընթացիկ իրականացման իրավիճակը, ինչպես նաև ապագա առաջնահերթությունների և համագործակցության ոլորտները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում Բաց կառավարման գործընկերության նախարարական կլոր սեղան-քննարկմանը հանդես եմ եկել ելույթով և ներկայացրել «Բաց կառավարման գործընկերության» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառությունների կատարման ընթացքը, համայնքներում իրականացվող մասնակցային բյուջետավորման ծրագիրը, Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն պայքարին ուղղված միջոցառումները:

   Ազգային-տեղական համագործակցություն բաց կառավարման շուրջ բարձր մակարդակի քննարկում հարց ու պատասխանի ձևաչափով հանդիպմանը ներկայացրել եմ, թե որ մեխանիզմներն են առավել արդյունավետ եղել մասնակցային բյուջետավորման բարեփոխումներին ամբողջ Հայաստանում

մասշտաբ հաղորդելու համար, ինչպես են ապահովվում Հայաստանում ազգային-տեղական գործընկերությունների համահունչ լինելը ավելի լայն բաց կառավարման նպատակների հետ:
Ներկայացրել եմ վարչատարածքային բարեփոխումների ազդեցությունը համայնքների զարգացման վրա, մասնակցային բյուջետավորման գործընթացի ներդրումը և զարգացումը, ազգային-տեղական գործընկերությունների դերը Բաց կառավարման նպատակների իրականացման մեջ, Բաց կառավարման բարեփոխումները և դրանց ազդեցությունը, ինչպես նաև ՀՀ կառավարության դերը Բաց կառավարման մարտահրավերների առաջմղման գործում:
Երկկողմ հանդիպում եմ ունեցել ԲԿԳ տեղական ղեկավար Խոսե Մարիա Մարիի և Արևելյան Գործընկերության ղեկավար Պիտեր Վարգայի հետ:
ԲԿԳ և տեղական լրատվամիջոցներին տված հարցազրույցի ընթացքում ներկայացրել եմ, թե որ ոլորտներն են առավել արդիական Հայաստանի Հանրապետության համար, թե ինչպես է կառավարությունը ներկայումս լուծում այս խնդիրները և ինչպես կարող է Բաց կառավարման սկզբունքը աջակցել մարտահրավերների հաղթահարմանը: Անդրադարձ եմ կատարել տեղեկատվության հասանելիությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, հանրային մասնակցությանը և այլն:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:
Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ՝ հետագա համագործակցության խորացման ուղղությամբ: Մասնավորապես կարևորվել է Հայաստանի Հանրապետության շարունակական ներգրավվածությունը Բաց կառավարման գործընկերությանը:
Երկկողմ հանդիպման ընթացքում ընդգծվել է ԲԿԳ նախաձեռնության շրջանակներում ազգային և տեղական մակարդակներում համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման ընթացքում առաջարկվել է կատարելագործել ազգային-տեղական համագործակցության մեխանիզմները՝ բաց կառավարման նպատակները ամբողջությամբ ապահովելու համար, շարունակել համագործակցությունը՝ ուղղված բաց կառավարման բարեփոխումների արդյունավետության բարձրացմանը:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

11.02.2025թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման
Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 29.01.2025թ. 70-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Դավիթ Խուդաթյան, ՀՀ ՏԿԵ նախարար
4. Գործուղման վայրը — Ֆիլիպիններ, /Մանիլա/
5. Գործուղման ժամկետները — 04.02-08.02.2025թ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — Ֆիլիպինների Բաց կառավարման գործընկերություն

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը			**Ընդամենը**
Ճանապարհա ծախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		**0**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	0
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	***0***	***0***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	***0***	***0***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր դիվանագիտական սրահից օգտվելու վճար		**0**
Ընդամենը ծախսեր		***0***	***0***

12.02.2025թ.

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան